

ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ ՀՈՒՇԱԳԻՐ


ԱՐՏԱԴՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՎԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՍՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՎԵՐԵՆԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ACCESS ՄԻԿՐՈԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՏՐԱՍՊՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ստորագրվում է Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և Հայաստանի մանուկներ հիմնադրամի /Երևան, Հայաստան/ միջև՝ ի հաստատումն ԱՄՆ պետքարտուղարության կողմից Հայաստանի մանուկներ հիմնադրամին տրամադրվող դրամաշնորհի, որով երկու տարվա ընթացքում դասերից հետո և հանգստյան օրերին կապահովվի 360 ժամ ինտենսիվ արտադպրոցական ուսուցում Հայաստանի պետական դպրոցների և այլ համապատասխան հաստատությունների տարածքում: Անգլերենի ուսուցման Access միկրոկրթաթոշակային ծրագիրը հանրային դիվանագիտության հեղինակավոր մի նախաձեռնություն է, որն ի ցույց է դնում Միացյալ Նահանգների նվիրվածությունը կրթության ու փոխադարձ ըմբռնման հարցերին:


Գիտակցելով անգլերենի իմացության բարելավման և փոխադարձ ըմբռնման խորացման կարևորությունը՝ Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունը, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանի մանուկներ հիմնադրամը սույնով արձանագրում են.

ԱՄՆ պետքարտուղարության միջոցով ֆինանսական միջոցների տրամադրումը Անգլերենի ուսուցման Access միկրոկրթաթոշակային ծրագրին՝ 500 13-18 տարեկան ծրագրի մասնակիցների անգլերենի իմացության միջին մակարդակ ապահովելու, անգլերենի դասավանդումը անգլերենի ուսուցիչների կարողությունների զարգացման միջոցով բարելավելու և մասնակիցների ու շրջանավարտների լեզվի և հմտությունների կատարելագործման միջոցառումներ կազմակերպելու համար՝ աշխատելով երիտասարդների հետ առնվազն տասնհինգ գյուղական համայնքներում և մարզկենտրոններում, կազմակերպելով դասընթացները պետական դպրոցների և այլ համապատասխան հաստատությունների տարածքներում:

Ստորագրված է Երևան քաղաքում 2018թ. հուլիսի 25-ին, երեք բնօրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն և հայերեն. ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:


Արայիկ Հարությունյան
ՀՀ Կրթության և գիտության
նախարար


Իննեսա Գրիգորյան
Հայաստանի մանուկներ
հիմնադրամի
փոխտնօրեն


Ռիչարդ Մ. Մեյջեր
Ամերիկայի Միացյալ
Նահանգների
դեսպան

Ceremonial Memorandum


Award of English Access Microscholarship Program Funds to Promote English Language Skills through an After-School Study Program

Between the Embassy of the United States of America to Armenia, the RA Ministry of Education and Science, and the Children of Armenia Fund based in Yerevan, upon the provision of the grant to the Children of Armenia Fund from the U.S. Department of State to provide two years of study through at least 360 hours of intensive, after-school, and weekend programming that take place in public schools of Armenia and other appropriate locations. The English Access Microscholarship Program is a high-profile public diplomacy initiative demonstrating the U.S. Government's dedication to education and mutual understanding.

In recognition of the importance of advancing English language proficiency and promoting mutual understanding, the Embassy of the United States of America to Armenia, the RA Ministry of Education and Science, and the Children of Armenia Fund hereby:

Celebrate the award of funds through the U.S. Department of State funding opportunity towards the English Access Microscholarship Program to equip with intermediate level English language skills 500 13-18 years old program participants, to improve the instruction of English through capacity building of English teachers and to initiate language and skills-based enhancement activities for participants and alumni, reaching out to youth in at least fifteen rural communities and regional centers, with the program being hosted at public schools of Armenia or other appropriate locations.


Signed this day, the 25th of July 2018, in the city of Yerevan, in three originals, in the Armenian and English languages, with both texts being equally authentic.



Arayik Harutyunyan
Minister
RA Minister of Education and
Science



Innesa Grigoryan
Deputy Director
Children of Armenia Fund



Richard M. Mills, Jr.
Ambassador
United States of America